

ԺԱ. ԳԼՈՒԽ

Սեդրակը պատանի էր այն ատեն, մեծ եղբորը հետ խանութը կեցող: Անոր աչքին դէմ, եզ մորթելու նման մորթեր էին մեծ եղբայրը, պատուական երիտասարդ, չորս տղու հայր, ոչ մէկուն սիրտը ցաւցուցած ամբողջ քաղաքին մէջ: Չէր լացած, աղաչած: Այլ գոցած աչքերը ու կղպած շրթները:

Յետոյ պառկեցուցեր էին զինքն ալ, գլուխը վիզին փոսիկէն՝ ձգելով դուրս եղբորը ուսերուն: Ու անոր այտերը քսուեր էին վիզէն հոսող արիւնին փրփուրին: Անոր սարսա՛փը: Աղաչա՛նքը: Լա՛ցը: Վերէն ազդմո՞ւնք մը, ջարդերու պահուն դիտուած շրջո՞ւմ, գո՞ւթ.– հրաշք մը միջամտեր էր զոհին: Անիկա հանուած էր ոտքի, հրամանովը այն մարդուն, որ կտրեր էր եղբորը գլուխը: Տեսե՞ր էր անոր պառկեցուիլը, երբ կը մաքրէր դանակին երախը մորթուածին լաթերուն: Այդ ազգասէր միւսլիմանը, որ հաճի Մարուքէ աղային արջառը կը բերէր Կարնոյ լեռներէն ու մեծցեր էր անոր հացովը, վերջին ռոպէին այցուեցաւ խղճի տագնապէ: Կ'ըսեն, թէ երախտագիտութիւնը ամբոխային զգացում է. ու Արեւելքի մէջ մաս կը կազմէ քիչիկ մըն ալ բարեբերուն: Նախնական